ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային քաղաքականության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ Արման Կարապետյանի և երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ Տիգրան Գասպարյանի գործուղման արդյունքների մասին

- ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

  ԱՐՄԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
  ՏԻԳՐԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

- ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

  ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային քաղաքականության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ,
  ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

- ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Իրանի Իսլամական Հանրապետություն, ք. Թեհրան, 2019 թվականի օգոստոսի 4-ից 7-ը

- ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ

Իրանի Իսլամական Հանրապետություն

- ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ

Մասնակցություն «Պարսից Ծոց – Սև Ծով միջազգային տրանսպորտային միջանցքի ստեղծման մասին» համաձայնագրի նախագծի շուրջ փորձագետների 4-րդ հանդիպմանը

- ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Ս.թ. օգոստոսի 5-6-ը Թեհրանում կայացավ «Պարսից Ծոց – Սև Ծով միջազգային տրանսպորտային միջանցքի ստեղծման մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) նախագծի շուրջ փորձագետների 4-րդ հանդիպումը, որին ՀՀ պատվիրակությունը մասնակցում էր հետևյալ կազմով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության վարչության տեխնիկական քաղաքականության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ Արման Կարապետյան, ՀՀ արտաքին

Առաքելյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ Տիգրան Գասպարյան: Հանդիպմանը մասնակցեց Թեհրանում նաև ՀՀ դեսպանության երրորդ քարտուղար Ռուդիկ Յարալյանը:

Մասնակցում էին նաև մյուս անդամ երկրների՝ Իրանի, Վրաստանի, Բուլղարիայի և Հունաստանի պատվիրակությունները:

Ադրբեջանական պատվիրակությունը հերթական անգամ չմասնակցեց բանակցություններին, չնայած այն հանգամանքին, որ հանդիպումից երկու շաբաթ առաջ հաստատվել էր վերջինիս մասնակցությունը, և նույնիսկ ներկայացվել մասնակիցների անունները[1]: Սակայն, ինչպես տեղեկացրեց իրանական կողմը հանդիպման սկզբում, միջոցառմանը նախորդող գիշերը Թեհրանում Ադրբեջանի դեսպանությունից հեռախոսազանգի միջոցով տեղեկացրել էին իրանական կողմին, որ հնարավոր չի լինի ապահովել մասնակցություն:

Հաջորդիվ, մեկնարկեցին պատվիրակությունների ղեկավարների ելույթները:

Մեր կողմից, որ անընդունելի է Ադրբեջանի՝ ընթացակարգային խախտումներով ներկայացված առաջարկների քննարկումը (բանակցությունների նախորդ փուլի՝ 2017թ. սեպտեմբերին Թբիլիսիում կայացած բանակցությունների արդյունքում կազմված արձանագրությունում հստակ նշված էր, որ Ադրբեջանը պետք է իր առաջարկները ներկայացներ մինչև 2018թ. հունվարի 27-ը, իսկ կողմերի առաջարկներն առհասարակ պետք է ներկայացվեին հաջորդ հանդիպումից առնվազն 2 ամիս առաջ), ընգծվեց, որ այդ առաջարկներն իրենց բովանդակությամբ հակասում են նախկինում համաձայնեցված նախագծի տեքստին և շեշտեցի, որ ադրբեջանական պատվիրակությունը մշտապես միջոցներ է ձեռնարկում՝ նախագծի համաձայնեցումը հետաձգելուն և միտված բանակցությունների բնականոն ընթացքը խաթարելուն: Կոչ արվեց ավանդապահին և Համաձայնագրի կողմ երկրներին Ադրբեջանի առաջարկները անընդունելի համարելու և դրանք քննարկումից դուրս թողնելու վերաբերյալ:

Մյուս պատվիրակությունները, բացառությամբ Բուլղարիայի պատվիրակությունից, որը պահպանեց չեզոքություն, կողմ արտահայտվեցին ադրբեջանական առաջարկների քննարկմանը: Առանձնահատուկ էին Վրաստանի պատվիրակության ջանքերը՝ միտված Ադրբեջանի շահերի պաշտպանությանը: Մասնավորապես՝ վրացական պատվիրակությունն ընդգծված կերպով պաշտպանեց Ադրբեջանի՝ որպես համաձայնագրի կողմ պետության, բանակցություններում իր նկատառումները ներկայացնելու իրավունքը՝ ավելացնելով, որ դրանք անպայմանորեն պետք է քննարկվեն:

---

[1] Միջպետական տնտեսական համագործակցության բաժնի պետի տեղակալ Կազիմ Հուսեյնալիև (պատվիրակության ղեկավար), Հարկերի նախարարության ներկայացուցիչ Էլկիմ Մամմադով, «Ադրբեջանի երկաթուղիներ» ընկերության ներկայացուցիչ Ալի Գասիմով, Տրանսպորտի, հաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայացուցիչ Նիջադ Միքայիլով, Պետական ծովային գործակալության ներկայացուցիչ Ֆիդան Գուրբանովա:

Համաձայնագրի տեքստի քննարկումների ընթացքում հանդես եմ եկել բովանդակային և տեխնիկական բնույթի բազմաթիվ առաջարկներով, որոնք մեծամասամբ ընդունվել են: Քննարկված հարցերից կարելի է առանձնացնել հետևյալները"

1. Հունաստանի առաջարկը՝ Համաձայնագրի վերնագրում Իոնական Ծով բառերը ավելացնելու վերաբերյալ:

Նախկինում ևս հունական կողմը հանդես էր եկել այս առաջարկով և այն չէր ընդունվել: Այս անգամ առաջարկը մնաց անարձագանք: Հետագայում որոշում ընդունվեց այդ առաջարկին բանակցությունների հաջորդ փուլում անդրադառնալու մասին

2. Ադրբեջանի առաջարկը՝ Կողմերի անվանումների մասին նշումը Համաձայնագրի նախաբանից հանելու վերաբերյալ

Իրանի պատվիրակության հետ պնդեցինք, որ դա անընդունելի է, քանի որ տվյալ Համաձայնագիրն ունի հիմնադիր անդամներ: Վրաստանի պատվիրակությունը կողմ էր անվանումները հանելուն՝ նշելով, որ ամեն դեպքում Համաձայնագիրը բաց է երրորդ կողմերի միանալու համար: Արդյունքում՝ որոշում կայացվեց անվանումները թողնելու վերաբերյալ: Ի դեպ, ինչպես նշված դեպքում, տեքստում ներառված ադրբեջանական կողմի մյուս առաջարկների դեպքում ևս Հայաստանի պատվիրակության ջանքերի շնորհիվ յուրաքանչյուր անգամ քննարկման արդյունքում ընդունվեց այն ձևակերպումը, որը մեզ համար ընդունելի էր:

3. Վրաստանի առաջարկը՝ Համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ մասը հանելու վերաբերյալ՝ պայմանավորված «հարկային պարտավորություններ ստանձնելու անհնարինությամբ»

Վրաստանի պատվիրակությունը նշեց, որ որպես Ադլերի համաձայնագրի կողմ-պետություն, չի կարող տրամադրել արտոնյալ հարկային պայմաններ, քանի որ նույն պայմանները պետք է կիրառի Ադլերի համաձայնագրի մյուս կողմերի նկատմամբ: Վրացական կողմը նշեց, որ առանց այդ էլ իր հարկային դաշտը բավականին ազատական է, ուստի լրացուցիչ պարտավորությունների ստանձնումն անընդունելի է:
Արդյունքում կոնսենսուսի հիման վրա որոշվեց, որ հարկային պարտավարությունների մասին դրույթը մի քիչ մեղմացնել, «կողմերը պետք է միջոցներ ձեռնարկեն հարկերը [] կրճատելու վերաբերյալ » ձևակերպումը փոխարինելով «կողմերը կարող են միջոցներ ձեռնարկել հարկերը [] կրճատելու վերաբերյալ» կողմերը կարող են միջոցներ ձեռնարկել:

4. Իրանի առաջարկը՝ «երկակի նշանակության բեռներ» սահմանումը Համաձայնագրի 6-րդ հոդվածից հանելու մասին վերաբերյալ

Իրանական կողմն առանց զգուշացնելու մյուս կողմերին Համաձայնագրից հանել էր երկակի նշանակության մասին բեռների վերաբերյալ դրույթը: Իր որոշումը պատվիրակությունը հիմնավորեց՝ նշելով, որ ԻԻՀ օրենսդրությամբ այդպիսի բեռների տեսակ չկա և որ տվյալ ձևակերպումը կարող է առարկա դառնալ կամայական շահարկումների, այսինքն՝ տարբեռ բեռներ կարող են դիտարկվել որպես ռազմական նշանակություն ունեցող: Բուլղարական պատվիրակությունն ընդգծեց, որ երկակի բեռները նախատեսված են ԵՄ օրենսդրությամբ, և Համաձայնագրով դրանց անդրադառնալը պարտադիր է: Հունաստանի ներկայացուցիչը նույնպես միացավ այդ պահանջին: ԵՄ անդամ երկրների և Իրանի պատվիրակությունները երկու օրվա ընթացքում փորձում էին համաձայնություն ձեռք բերել այս հարցում: Իրանը նույնիսկ առաջարկեց անվանումը փոխարինել «Պայմանականորեն թույլատրելի բեռներ» անվանմամբ՝ պահպանելով նույն բնորոշումը: Խոսելով մեր պատվիրակության անունից՝ նշեցի, որ, ըստ էության, երկու բնորոշումներն էլ ընդունելի են: Բուլղարիան պատրաստակամություն հայտնեց զիջումների գնալու վերաբերյալ: Սակայն վրացական պատվիրակությունը միացավ քննարկումներին և պնդեց, որ եթե երկակի նշանակության բեռների մասին նշում չլինի, ապա Համաձայնագիրն ընդունելի չէ:

Քանի որ չհաջողվեց «երկակի նշանակության բեռների» հարցի վերաբերյալ գալ ընդհանուր հայտարարի, Իրանի պատվիրակությունն առաջարկեց մեկ այլ հանդիպում անցկացնել քննարկումներն ավարտին հասցնելու համար: Հունաստանի ներկայացուցիչն առաջարկեց, որ դա տեղի ունենա Աթենքում մինչև տարվա վերջ:

Նշեցինք, որ մենք նույնպես ուրախ կլինենք հյուրընկալել պատվիրակություններին Հայաստանում, որտեղ բոլոր պայմանները ստեղծված կլինեն Համաձայնագրի համաձայնեցման գործընթացն ավարտին հասցնելու համար:

Իրանի պատվիրակության ներկայացուցիչներից մեկն ընդգծեց, որ այդ դեպքում, Աթենքում համաձայնության ձեռք բերելուց հետո, կփորձեն ստորագրման բարձրաստիճան արարողությունն անցկացնել Հայաստանում:

- ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ